ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

3 դեկտեմբերի Շաբաթ 2022
տպագրության ԺԱ տարի

174
(2654)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 147

2018 թվականից սկսած՝ իր պաշտոնավարման մեկնարկից մինչեւ օրս, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը բազմաթիվ մանիպուլատիվ հայտարարություններով է հանդես եկել, որոնք վերաբերել են նաեւ պաշտպանության ոլորտին, ռազմական ծախսերին: «Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է դրանցից եւս մեկը: 2021 թվականի հունիսին՝ Արմավիրի մարզ կատարած նախընտրական այցի ժամանակ, Նիկոլ Փաշինյանը հայտարարել էր՝ իբրեւ թե բանակի 10 տարվա ընթացքում ձեռք բերված զինամթերքի 75-80 տոկոսն իր կառավարության օրոք է ձեռք բերվել: Ավելի վաղ նա հայտնել էր, որ 2020-ի բյուջեում Պաշտպանության նախարարությանը հատկացվել է 307 միլիարդ դրամ, որը 2018-ի փաստացի ցուցանիշը գերազանցում է 28 տոկոսով կամ 66 միլիարդ դրամով, իսկ 2017-ի փաստացիի համեմատ՝ ավելի է մոտ 4.5 տոկոսով: Кавказский узел պարբերականն այդ ժամանակ եւս հոդված էր հրապարակել, որտեղ պնդում էր, որ Փաշինյանը մարդկանց մոլորեցնելու համար մանիպուլյացիայի է դիմում, ստում է՝ հատկապես սպառազինության վրա ծախսված միջոցների առումով: Հոդվածից մեջբերումներ այդ ժամանակ կատարել էր 168.am-ը: «Զենքի մատակարարման վերաբերյալ բոլոր պայմանագրերը կնքվել են մինչեւ 2018 թվականը, որից հետո դրանք միայն կատարվել են, այն էլ՝ ոչ ամբողջությամբ, խիստ կրճատված եւ աղավաղված: Մասնավորապես, ըստ Ստոկհոլմի միջազգային խաղաղության խնդիրների ուսումնասիրության ինստիտուտի՝ 2019 թվականի ծախսերի մեծ մասը՝ 190 միլիոն դոլարը, ուղղվել է ավիացիային, այսինքն՝ հենց այն «Սու-30»-ների գնմանը, որոնք մատակարարվել էին առանց զինամթերքի եւ չէին ներգրավվել պատերազմին: Եթե սրանք չհաշվենք, ապա Փաշինյանի պաշտոնավարման ժամանակաշրջանին ՀՕՊ-ի եւ հրթիռների համար բաժին է ընկնում ընդամենը 58 միլիոն դոլար, ընդ որում՝ ՀՕՊ-ից ավելի վաղ նախատեսված ТОР-երի գնումները, ինչպես նաեւ Հորդանանից ձեռք բերված անպետք «Օսա-ԱԿ»-ները, որոնք ոչնչացվել են առաջին իսկ օրը»,- ասվում է հոդվածում: Այսինքն՝ հերթական անգամ Նիկոլ Փաշինյանը մանիպուլյացիա է արել:

Արցախի նորանշանակ պետական նախարար Ռուբեն Վարդանյանը, որ միայնակ տեղափոխվել է Արցախ մշտական բնակության եւ աշխատելու նպատակով, արդեն քաղաքական մի շարք պայմանավորվածություններ է խախտել: Մասնավորապես, պայմանավորվածություն է եղել, որ Արցախի նախարարները մինչեւ հունվարի վերջ պետք է աշխատեն, որից հետո Վարդանյանը կձեւավորի կաբինետը: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Ռուբեն Վարդանյանը, ըստ էության, չի պահել խոստումը եւ աշխատանքային նպատակով նոյեմբերի վերջին հրավիրել է գործադիրի անդամներին, ապա անակնկալ կերպով 1 օր ժամանակ տվել հեռանալու համար: Ինչպես հայտնի է, նոյեմբերի 23-ին 9 նախարար ազատվել էին պաշտոնից. Արցախում 11 նախարարություն կա: Բացի այդ, Ռուբեն Վարդանյանը ոչ միայն պայմանավորվածություն է խախտել, այլ նաեւ Արցախում առկա ավանդույթները: Բանն այն է, որ թե՛ Արցախում, թե՛ Հայաստանում ավանդույթ է առկա, որ նախկին նախարարներին ըստ պատշաճի են ճանապարհում՝ աշխատակազմի հետ հրաժեշտի օր կազմակերպելով, սակայն նախարարներ են եղել անգամ, որ իրենց աշխատասենյակի դուռը փակել, բանալին տվել են քարտուղարությանը կամ պարեկին եւ դուրս են եկել շենքից, առանց պատշաճ շնորհակալության արժանանալու այս տարիների աշխատանքի համար: Այն, որ Ռուբեն Վարդանյանը ռեսուրս չունի եւ չի շտապում նոր նախարարներ նշանակել, ապացուցում է այն հանգամանքը, որ, Արցախի Հանրապետության կառավարության պաշտոնական կայքի համաձայն, 11 նախարարություններից 9-ը ղեկավարում են պաշտոնակատարները. միայն առկա են ՀՀ պաշտպանության նախարար եւ ներքին գործերի նախարար:

«Ուրմալու» առեւտրի կենտրոնի պայթյունի զոհերի ֆոնին PR անող փոխքաղաքապետը այժմ էլ որոշել է «Եվրատեսիլ» երգի մրցույթն օգտագործել ապագա քաղաքապետի պաշտոնում իր դիրքերն ամրապնդելու համար: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ Տիգրան Ավինյանն արդեն հարմար տեղավորվել է քաղաքապետի «աթոռին» եւ իրեն արդեն քաղաքային իշխանության ղեկավար է զգում: Այս խոսքերի վառ ապացույցը նաեւ երեկ Երեւանի քաղաքապետարանում անցկացված մամուլի ասուլիսն էր, որին միանգամից երկու փոխքաղաքապետ էր մասնակցում, բայց քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը չկար ու չկար: Եվ այս օրերին էլ, երբ մեծ աղմուկ են հանել Հանրապետության հրապարակում իրականացված լուսազարդարման աշխատանքները, արձագանքները հենց փոխքաղաքապետ Տիգրան Ավինյանի մակարդակով է: Վերջինս քաղաքապետարանում իր ձեռքն է վերցրել ամեն ինչ եւ իրեն լիովին քաղաքապետ է զգում: Երեկ՝ մամուլի ասուլիսի ժամանակ, Տիգրան Ավինյանը եւս իրեն զգում էր որպես քաղաքապետ, որոշում, թե բանախոսներից ով որ հարցին պետք է պատասխանի, սակայն այդպես էլ խուսափեց պատասխանել հարցին՝ ամանորյա զարդարանքներն իր PR-ի համար են արվում, թե ոչ: Ավելին՝ շրջանառվող տեղեկությունների համաձայն՝ դեկտեմբերի 5-ին հենց Երեւանի փոխքաղաքապետ Տիգրան Ավինյանն է «Եվրատեսիլ» երգի մրցույթի մասնակիցների հետ միացնելու ամանորյա տոնածառերի լույսերը, ինչն ավանդաբար հենց քաղաքապետն է անում: Հենց այդ օրը՝ ժամը 13:00-ին, Հրաչյա Սարգսյանը ֆեյսբուքյան ասուլիսով է հանդես գալու եւ թերեւս կանդրադառնա նաեւ այդ հանգամանքին:

Սեփական թիմի ներսում սեւ ցուցակներ կազմող եւ թիմակիցների դեմ դավեր նյութող՝ ԱԺ պաշտպանության հարցերի հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանի հերթական «զոհը» ՀՀ ոստիկանապետ Վահե Ղազարյանն է: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Քոչարյանին մտերիմ մի քանի ՔՊ-ական պատգամավորներ նախապատրաստվում են դեկտեմբերի 9-ին, երբ ՀՀ ոստիկանապետ Վահե Ղազարյանը պետք է ներկայանա խորհրդարան: Ինչպես հայտնի է, դեկտեմբերի 6-ին մեկնարկելու է ԱԺ հերթական նստաշրջանը, եւ, ըստ նախնական տեղեկությունների, դեկտեմբերի 9-ին պետք է քննարկվի Ներքին գործերի նախարարության ստեղծման հարցը: Այդ օրը Վահե Ղազարյանի համար այնքան էլ հանգիստ չի լինելու, քանի որ որոշ ՔՊ-ականներ որոշել են քննադատել նրա գործունեությունը: Բանն այն է, որ ՔՊ-ում Անդրանիկ Քոչարյանի թեւն ամեն ինչ անում է, որպեսզի Վահե Ղազարյանը ներքին գործերի նախարար չդառնա, եւ, որպես նրա վատ աշխատանքի ցուցանիշ, քաղաքական իշխանություններին ցույց են տվել ոստիկանության որոշումներից մեկը, որը կապված է ԱԺ նախկին պատգամավոր Միեր Սեդրակյանի անվան հետ: Ըստ այդմ, կարծիքներ են հնչել, թե իրենք նախկինների գործողությունների դեմ են պայքարում, իսկ ոստիկանապետը նրանց հետ գործարքի է գնում: Մամուլը գրել էր, որ Միեր Սեդրակյանի անվան հետ կապվող «Բիդեք» ՍՊԸ-ն հաղթել է ոստիկանության կողմից հայտարարված մրցույթը, որի ընդհանուր արժեքը 1 մլրդ 275 միլիոն դրամ է՝ 3 մլն դոլարից ավելի: Մամուլը նաեւ գրել էր, որ «Բիդեք» ՍՊԸ-ի 100 տոկոս բաժնեմասի նախկին սեփականատեր Գառնիկ Ավետիսյանը ԱԺ նախկին պատգամավոր Միեր Սեդրակյանի՝ Թոխմախի Միերի մտերիմ ընկերն է, անգամ գրվել էր նաեւ, որ իրականում ընկերությունը պատկանում է Միեր Սեդրակյանին, բայց գրանցված է ընկերոջ անունով: Բացի այդ, Քաղաքաշինության կոմիտեն ու Երեւանի քաղաքապետարանը 2022 թվականի ընթացքում մոտ 3,2 միլիարդ դրամի գնում են կատարել այդ ՍՊԸ-ից: Գնումների գործընթացը համակարգչային բաշխումով է կազմակերպվում, ու շատ հաճախ մարդկային գործոնը զերոյական է դառնում: Ինչեւէ, «Ժողովուրդ» օրաթերթը կհետեւի ՔՊ-ականների արշավին Վահե Ղազարյանի դեմ, քանի որ ակնհայտորեն Անդրանիկ Քոչարյանը ՔՊ-ականների մի մասի ձեռքերով «պատերազմ է հայտարարել» ՀՀ ոստիկանապետին:

ՊԵՏՔ ՉԷ ԶԱՐՄԱՆԱԼ

ՎՏԱՆԳԱՎՈՐ ՈՒՂԵՐՁՆԵՐ ԿԱՅԻՆ

Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արթուր Խաչատրյանն ասում է, որ բնավ պետք չի զարմանալ ՌԴ արտաքին գործերի նախարարի արած հայտարարություններից, քանի որ նման հայտարարություններ ՀՀ իշխանությունները վաղուց են արել ու հաստատել: «Լավրովին ամրապնդեց այն, որ ՀՀ իշխանություններին համար Արցախի Հանրապետություն ու Արցախի հարց գոյություն չունի»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասաց Խաչատրյանը:

-Պարոն Խաչատրյան, ՌԴ արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովի մամուլի ասուլիսը հարցեր է առաջացրել հանրության մոտ, մասնավորապես, թե ինչպես ստացվեց, որ ՌԴ-ն բացեիբաց հայտարարում է, որ Ադրբեջանը պատրաստ է ապահովել Արցախում ապրող հայերի անվտանգությունը, կամ որ բանակցային գործընթացը փակուղի է մտել: Դուք նրա հայտարարություններն ինչպե՞ս կմեկնաբանեք:

-Լավրովի հայտարարության մեջ ավելի վտանգավոր ուղերձներ կային, եւ երեւի թե սկսենք այդ ուղերձներից: Մարդը բացահայտ ասաց, որ Հայաստանի իշխանությունները հրաժարվել են քննարկել Արցախի Հանրապետության կարգավիճակի հարցը, ընդհանրապես հրաժարվել են քննարկել: Այսինքն՝ իրենց համար Արցախի հարց գոյություն չունի, Արցախը որպես վարչաքաղաքական անկախ միավոր այլեւս գոյություն չունի, եւ Հայաստանի իշխանություններն Արցախի հարցն իջեցրել են մինչեւ Ադրբեջանում ազգային փոքրամասնության խնդիր: Եթե ՀՀ փաստացի ղեկավարը նման քաղաքական դիրքորոշում է որդեգրում, ապա ՌԴ-ից ի՞նչ եք սպասում: Մի՛ սպասեք, որ Ռուսաստանը կամ Ֆրանսիան, որը բացառություն է, եւ խորհրդարանը հայանպաստ որոշում է ընդունել, սակայն միջազգային հանրությունը չի կարող ավելի հայ եւ հայանպաստ լինել: Միջազգային հանրությունը կարող է աջակցել քեզ, բայց ինքը չի պաշտպանի մեր շահերը, եթե մենք չպաշտպանենք: Խորհրդարանում երեկ խոսում էին, որ անվտանգությունը երաշխավորում են ռուսները, սակայն որեւէ փաստաթուղթ Հայաստանը չի ստորագրել (եթե գաղտնի փաստաթուղթ չէ), որում գրված լինի, որ Հայաստանը հրաժարվում է պաշտպանել Արցախը, եւ այդ ամենը միայն ՌԴ խաղաղապահների գործն է, այլ ոչ թե հայկական զինված ուժերի հետ համատեղ: Այդպես է եղել 30 տարի, թող առաջին գծում կանգնեին ռուսները, երկրորդ գծում՝ հայերը: Սակայն այս իշխանությունները հպարտորեն հայտարարում են, թե Արցախից հայկական զորամիավորումները հանել են: Այնպես որ, պետք է հասկանանք՝ինչ է ուզում այսօրվա իշխանությունը, եւ համադրենք արտաքին ուժերից եկող ազդակների եւ հայտարարությունների հետ: Իհարկե, վտանգավոր հայտարարություն էր, եւ նաեւ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինն էր ընդգծել, թե եթե հայերը չեն ուզում, ապա էլ ռուսական կողմից ի՞նչ եք ակնկալում:

-Արեւմտյան ուժերը սա մեկնաբանում են այնպես, թե սա վկայություն է այն մասին, որ ՌԴ-ն Արցախի հարցը մոռացության է մատնում կամ այն դիտարկում Ադրբեջանի կազմում եւ չի կատարում իր ռազմավարական գործընկերոջ պարտականությունները:

-Ռազմավարական գործընկերոջ պարտականությունները որո՞նք են, որտե՞ղ է դա սահմանված: Մարդիկ ասում են, որ պատրաստ են դիտարկել Հայաստանին աջակցության հարցը, Նիկոլ Փաշինյանը, սակայն, վետո է դնում ՀԱՊԿ-ի դեկլարացիայի վրա եւ ասում, որ քաղաքական գնահատական ենք ուզում: Այսինքն՝մարդիկ ասում են, որ պատրաստ են քննարկել եւ ասել, սակայն ինքը կամակորություն է անում եւ ասում՝ կամ սա, կամ ոչինչ: ՌԴ-ի, ԱՄՆ-ի եւ Իրանի արձագանքը արձագանք է ՀՀ-ի քաղաքականությանը: Եթե ՀՀ-ն սխալ քաղաքականություն է վարում, ապա մի՛ սպասեք, որ մեկ ուրիշը հայանպաստ քաղաքականություն է վարելու: Մեր դարդը չենք կարող ուրիշներին պատվիրակել, մենք պետք է մեր խնդիրը լուծենք, ինչը հաջողությամբ անում էինք՝ 1988 թվականի փետրվարի 20-ից սկսած:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ՉՄԱՍՆԱԿՑԵՑ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆԸ

ԱՐՑԱԽԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՉԸՆԴՈՒՆՎԵՑ

Արցախի ու Հայաստանի անվտանգության մասին ընդդիմության նախագիծը երեկ տաղավվեց: Իշխող ուժը չմասնակցեց քվեարկությանը, միայն ընդդիմադիրները կողմ քվեարկեցին այդ նախագծին: Ընդդիմադիր խմբակցություններն առաջարկում էին՝ Հայաստանի խորհրդարանը հայտարարություն ընդունի, որ Արցախը չի կարող լինել Ադրբեջանի կազմում: Արցախի հարցը պետք է լուծվի ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքով, առանց սահմանափակումների:

Ընդդիմությունն առաջարկում է այսպիսով պատասխանել Ադրբեջանի խորհրդարանի հայտարարությանը, որն ընդունվել էր անցած ամիս: Ընդդիմության գնահատմամբ՝ դրանով Միլի մեջլիսը արդարացրել է 44-օրյա պատերազմի հանցագործություններն ու Հայաստանի եւ Արցախի դեմ նոր սպառնալիքներ հնչեցրել:

Ինչո՞ւ իշխանությունը չի ցանկանում ընդունել այս հայտարարությունը, ինչի՞ն են դեմ: Արտաքին հարցերի հանձնաժողովի ղեկավար Էդուարդ Աղաջանյանը կետերով ու մանրամասն չթվարկեց, թե ինչը իրենց սրտով չէ. ընդհանուր նշեց, թե նախագծում առաջարկված ձեւակերպումները նախապատերազմյան արտաքին քաղաքականության կրկնությունն են:

Ընդդիմությունը կարծում է, որ միասնաբար ընդունված հայտարարությունը նաեւ միջազգային հանրությանը ուղերձ կլինի Հայաստանի արտաքին քաղաքականության կարմիր գծերի մասին: Միջազգային դիվանագիտական կոնսոլիդացիան Հայաստանի շուրջ ընդդիմության ձեւակերպումներով ընկալելի չէ՝ ըստ իշխող ուժի: Էդուարդ Աղաջանյանի կարծիքով՝ դա ռիսկային է:

«Մեր վերլուծությունը ցույց է տալիս, որ «Հայաստան» խմբակցության կողմից առաջարկվող տերմինաբանությունն առաջացնում է ավելի շատ ռիսկեր, քան նպաստում է Հայաստանի Հանրապետության խաղաղության օրակարգի առաջխաղացմանը», - նշեց Աղաջանյանը:

Արցախի մասին ընդդիմությունը ամիսներ առաջ էլ էր առաջարկում հայտարարություն ընդունել, բայց իշխանությունը չմասնակցեց նիստին, ու այն տապալվեց: Դրանից հետո ընդդիմադիրները մի քանի ամիս չվերադարձան խորհրդարան:

ԿԱՊԻՏՈՒԼՅԱՆՏ ԵՆ

Ինչպես հայտնի է, Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության՝ «Վերածնվող Հայաստան» կուսակցության թեւը լքել է խորհրդարանը: Կուսակցության առաջնորդ Վահե Հակոբյանի հետ մանդատից նաեւ 2 պատգամավորներ՝ Հռիփսիմե Ստամբուլյանն ու Ելենա Կիրակոսյանն են հրաժարվել: «Վերածնվող Հայաստան» կուսակցությունից միայն Ջեմֆիրա Միզոեւան է պահպանել մանդատը: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ, մեր տեղեկություններով, Վահե Հակոբյանի ու թիմակիցների խորհրդարանական գործունեությունը դադարեցնելը կոնկրետ նպատակներ ունի: Չի բացառվում՝ իշխանության հետ համագործակցության արդյունք է մանդատներից հրաժարվելը: «Համերաշխություն» կուսակցության նախագահ Սարգիս Ավետիսյանը երեկ հրապարակավ իր վրդովմունքն է հայտնել «Հայաստան» դաշինքի մաս կազմող այս կուսակցության պահվածքից: «Մենք եղել ենք այն քաղաքական ուժերից, որ ասել ենք՝ ընդդիմությունը պետք է վերադառնա խորհրդարան: Մենք չենք ասում՝ գնացեք, կնքեք ձեր քաղաքական կապիտուլյացիան ու հեռացեք: Դուք քաղաքական կապիտուլյատներ եք, ձեզ ուղարկել ենք ընդեղ, որ պայքարեք, դուք գնում, գրում ու դուռ՞ս եք գալիս: Ինչո՞ւ եք գցում ամեն ինչ «Դաշնակցության» վրա, չի կարելի պայքարը թողնել միայն այդ կուսակցության վրա», - հայտարարեց կուսակցության առաջնորդը: Այսինքն՝ ընդդիմադիր դաշտում Վահե Հակոբյանին եւ նրա փոքրաթիվ թիմին համարում են քաղաքական կապիտուլյանտ:

ՍՊԱՍԵԼ Է ԴՈՒՄԱՆՅԱՆԻՆ

Փարիզաբնակ քանդակագործ Դավիթ Երեւանցին «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում իր դժգոհությունը հայտնեց ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Վահրամ Դումանյանի աշխատանքի եւ պահվածքի վերաբերյալ: Նա մեզ հետ զրույցում վերհիշեց մի պատմություն, երբ մի ամբողջ օր իր արվեստանոցում սպասել է նախարար Վահրամ Դումանյանին, սակայն վերջինս ոչ միայն խախտել է պայմանավորվածությունը եւ չի եկել, այլ նաեւ չի էլ զգուշացրել այդ մասին: «Ես նախարարին ասել եմ՝Ձեզ սիրով կսպասեմ իմ տուն-արվեստանոցում, բացի այդ, կտեսնեք ստեղծագործություններ, որ երբեք չեք տեսել ոչ մի տեղ: Այդպես, կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարը չեկավ, անգամ չզանգեց, գոնե ունենար տարրական քաղաքավարություն, զանգեր, ասեր՝ կներեք, վարպե՛տ, չկարողացա գալ, կամ այս ինչ բանն էր պատահել: Գոնե ասեիք, զգուշացնեիք, իսկ ես ամբողջ օրը սպասել եմ, որ պետք է գար՝հարգելով իր խոստումը, բայց չեկավ», - պատմեց նա: Քանդակագործի խոսքով՝ իր արած գործերն են հավերժ, իսկ նախարարները փոխվում են: «Այսօր նա նախարար է, բայց վաղը չի լինելու, բայց ես հավերժ եմ, տասնյակ գործեր ունեմ մայր Հայաստանում, Փարիզում, աշխարհում: Ես ստացել եմ պետական մասշտաբով ամենապատվավոր կոչումները: Այս վարչապետի դրած մշակույթի նախարարը երեւի չի հասկանում, նա մաթեմատիկայի մասնագետ է, բայց պետք է լավ հաշիվ աներ՝նա հավերժ չէ, ես եմ հավերժը: Ես եմ մշակույթը ստեղծում», - հայտարարեց նա:

ՓՈՐՁՈՒՄ ԵՆ ԱՐԴԱՐԱՆԱԼ

ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Տարոն Չախոյանը, բան ու գործը թողած, հետեւում է գործադրի շենքի անվտանգության համար տեղադրված տեսախցիկների աշխատանքին: Հետեւելը՝ դեռ ոչինչ, իրեն իրավունք է վերապահում տեսախցիկների արձանագրածները հրապարակել: Երեկվանից իշխանամերձ լրատվամիջոցներն ու պաշտոնյաները (որոնց մեջ, ի դեպ, իրավաբաններ կան), մեկը մյուսին հերթ չտալով, տարածում են մոնտաժված մի տեսանյութ, որտեղ լրագրող-օպերատորը ցուցադրում է պատի մեջ մտցված հեղույսը: Կադրը տեսախցիկով ֆիքսում է հեղույսը հանել-դնելը, ինչին էլ հենց հղում են անում իշխանության ներկայացուցիչներն ու արդարանում, թե օպերատորն է ծակ բացել ու հեղույսը պատի մեջ մտցրել: Եթե անգամ ենթադրենք, որ ընդդիմադիր լրատվամիջոց ներկայացնող օպերատորը, գայլիկոն ձեռքն արած, պատը ծակել ու հեղույսն այդ անցի մեջ է տեղադրել, ապա պատմամշակութային արժեք համարվող շենքի վրա մի քանի հազար անցքերի հեղինակներն ովքե՞ր են. նորից լրագրողնե՞րը, թե՞, ամեն դեպքում, «նախկինները»: Իհարկե, պարզից էլ պարզ է, որ իշխանության ներկայացուցիչներն այժմ արդարանալու ու մեղքն իրենց վրայից գցելու խնդիր են փորձում լուծել, բայց նախ պետք է սկսել այն հարցից, թե ինչ ճանապարհով է տեսանյութը Տարոն Չախոյանին հասել, ապա պարզել՝ ով է նրան իրավունք տվել հրապարակելու այն: Որքանով տեղյակ ենք, նա ո՛չ ԱԱԾ-ի, ո՛չ էլ մեկ այլ ուժային կառույցի աշխատակից չէ, հետեւաբար ինչո՞ւ է իր լիազորությունները գերազանցող գործողություն կատարել:

3 ՄԵՂԱԴՐՅԱԼ

ArmLur.am-ին ՀՀ քննչական կոմիտեից հայտնեցին, որ Երվանդ Քոչարի միջադեպով վարույթ է նախաձեռնվել ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 3-րդ մասի, 335-րդ հոդվածի 1-ին մասի եւ 452-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով: Վարույթով նախաքննությունը շարունակվում է, տվյալ պահի դրությամբ որպես մեղադրյալ է ներգրավված 6 անձ, որոնցից 3-ը կալանավորված են, 3-ի նկատմամբ եւս որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը, եւ ոստիկանությանը տրվել է նրանց հայտնաբերելու եւ նախաքննության մարմին հարկադիր ներկայացնելու հանձնարարություն: Հիշեցնենք, որ նոյեմբերի 7-ին ոստիկանությունը Երեւանում կանխել է մինչեւ ատամները զինված «ռազբորկան»: Ոստիկանության Կենտրոնական բաժնի քրեական հետախուզության բաժանմունքում եւ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնում ժամը 20:30-ին օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Երվանդ Քոչար փողոցում մի խումբ երիտասարդների միջեւ զինված «ռազբորկա» է տեղի ունենում:

ՈՒՇԱԳՐԱՎ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՐՁԱԳԱՆՔ ՉԿԱ

Մոսկվան Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցն առկախված, ասել է թե՝ աղագային թողնելու առաջարկ դեռեւս տասը տարի առաջ է արել: Այս մասին դեկտեմբերի 1-ին՝ բավականին ծավալուն (մոտ երկու ժամ տեւած) մամուլի ասուլիսի ժամանակ, հայտարարել է Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովն ու ավելացրել՝ կարգավիճակի հարցը հայկական կողմը փակել է վերջերս՝ հոկտեմբերին Պրահայում տեղի ունեցած հանդիպման ժամանակ:

Լավրովը, նկատենք, հիշեցնելով մոտ տասը տարի առաջ Երեւան բերված առաջարկը, նկատի է ունեցել այն փաթեթը, որը հայ հասարակության մեջ առավել հայտնի էր որպես «Լավրովի պլան»: Ըստ այդ մոտեցման, նշենք, ենթադրվում էր, որ Ադրբեջանին էին անցում Արցախի Հանրապետության հինգ շրջանները, եւս երկուսը՝ Քարվաճառն ու Բերձորը, որոնք Հայաստանը կապում էին Արցախին, մնում էին հայկական վերահսկողության տակ: Դրանց ճակատագիրը նույնպես պետք է վճռվեր Արցախի կարգավիճակի հարցի հետ մեկտեղ: Ինչ վերաբերում է կարգավիճակի հարցին, ապա այն թողնվում էր ապագային, ասել է թե՝ սերունդներին:

Ըստ Լավրովի հավաստիացումների՝ այդ տարբերակը կարող էր գործել նաեւ 44-օրյա պատերազմից հետո անգամ, երբ հակամարտող կողմերի ղեկավարները ռուսական միջնորդությամբ հանդիպել են: Այդ կետն անգամ, ՌԴ արտգործնախարարի փոխանցմամբ, Ռուսաստանը նաեւ խաղաղության պայմանագրի իր տարբերակում է ներառել ու ներկայացրել կողմերին:

«Պաշտոնական Բաքուն պատերազմից հետո՝ նախնական շրջանում, համաձայնել է քննարկել այդ տարբերակը, բայց արդեն Պրահայի հանդիպումից հետո մերժել է այն: Նրանք Սոչիի հանդիպման ժամանակ փոխանցել են, թե փաստաթուղթը ցանկանում են ՄԱԿ-ի կանոնադրության եւ Ալմա-Աթայի հռչակագրի համաձայն ստորագրել: Իսկ երբ բոլոր կողմերը հավանության են տալիս ինչ-որ փաստաթղթի (Ալմա-Աթայի հայտարարությունը նկատի ունի), ապա նշանակում է՝ կարգավիճակի հարցն արդեն իսկ դուրս է մնացել բանակցային գործընթացից: Իսկ այդ հռաչակիրգն ասում է, որ միութենական երկրները անկախ պետություններ են ստեղծում՝ ճանաչելով այն սահմանները, որ եղել են ԽՍՀՄ ժամանակ»,-ներկայացրել է բանախոսն ու ընդգծել, որ պաշտոնական Երեւանը վերջին շրջանում ոչ թե Արցախի կարգավիճակի, այլ այնտեղ ապրող մարդկանց իրավունքների մասին է խոսում:

Լավրովը նաեւ տեսակետ է հայտնել, որ Ադրբեջանը հավաստիացումներ է տալիս, թե պատրաստ է ապահովել Արցախում ապրող հայ ժողովրդի իրավունքներն ու անվտանգությունը:

Նա նաեւ անդրադարձել է եվրոպացի պաշտոնյաների ջանքերով տեղի ունեցող Փաշինյան-Ալիեւ հանդիպումներին՝ համարելով, որ նրանք փորձում են իրենցով անել ՌԴ միջնորդական ջանքերը:

Ավելի վաղ, հիշեցնենք, ՌԴ արտաքին գերատեսչության ղեկավարը խոսել էր նաեւ Արցախի՝ ՌԴ կազմում ներառվելու հավանականության մասին՝ ըստ երեւույթին բացառելով թե՛ նման սցենարը, թե՛ Մոսկվայի նման մտադրությունը:

Ինչ վերաբերում է Սերգեյ Լավրովի հայտարարությունների մասով մեր՝ Հայաստանի պաշտոնյաների հայտարարություններին, ապա առ այս պահը դրանք բացակայում են. ո՛չ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ո՛չ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանն ու այլ պաշտոնյա որեւէ կերպ չեն արձագանքել:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՆԴՐԱԴԱՐՁԵԼ Է ՀԱՆԴԻՊՄԱՆԸ

ԵՄ արտաքին գործերի եւ անվտանգության քաղաքականության բարձրագույն ներկայացուցիչ Ժոզեպ Բորելը իր սոցիալական ցանցի միկրոբլոգում անդրադարձել է նախօրեին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի հետ հանդիպմանը:

Նա, մասնավորապես, նշել է. «Հայաստանի արտգործնախարար Արարատ Միրզոյանի հետ քննարկել ենք տարածաշրջանում խաղաղության կառուցման եւ հակամարտությունների կայուն կարգավորման ուղիները:

Եվրամիությունը հավատարիմ է Բաքվի եւ Երեւանի միջեւ խաղաղ բանակցություններին նպաստելուն»:

51–ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՄԻՔՈՑԱՌՈՒՄ

Սույն թվականի դեկտեմբերի 1-ին փոխվարչապետ Համբարձում Մաթեւոսյանը ներկա է գտնվել Արաբական Միացյալ Էմիրությունների կազմավորման 51-րդ տարեդարձի միջոցառմանը:

Փոխվարչապետը գոհունակությամբ նկատել է, որ վերջին երկուսուկես տասնամյակի ընթացքում Արաբական Միացյալ Էմիրությունների հետ հաջողվել է ձեւավորել ամուր եւ դինամիկ զարգացող բազմաոլորտ համագործակցություն:

Ընդգծելով հայ-էմիրաթական փոխգործակցության բարձր մակարդակը՝ Համբարձում Մաթեւոսյանը կարեւորել է երկկողմ հարաբերություններում առկա զարգացման մեծ ներուժի օգտագործման անհրաժեշտությունը՝ համոզմունք հայտնելով, որ համատեղ ջանքերի գործադրմամբ հնարավոր կլինի էլ ավելի խորացնել եւ ընդլայնել համագործակցության երկկողմ օրակարգը:

ԺԱՄԱՆԱԿ ՉԿԱ

ՈՂՋԱՄԻՏ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՔՆՆԵԼՈՒ ՊԱՀԱՆՋ

Ամ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «Հայաստանում դատարանների միջոցով խախտված իրավունքների վերականգնումը շատ հաճախ անհնար է դառնում. դատարաններն այնքան գերծանրաբեռնված են աշխատում, որ տարիներ են տեւում դատական գործընթացները:

Սույն թվականի նոյեմբերի 8-ին Ազգային Ժողովում կազմակերպել եմ աշխատանքային քննարկում՝ «ՀՀ դատարանների գերծանրաբեռնվածության խնդիրները եւ դատական գործը ողջամիտ ժամկետում քննելը՝ որպես «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր» թեմայով:

Քննարկման ժամանակ հնչել են մի շարք առաջարկներ, որոնց լուծում տալու անհրաժեշտությունը առավել, քան արդիական է. գուցե օգնի ծանրաբեռնվածության թոթափմանը:

Ի թիվս այլ առաջարկների՝ դատական իշխանության ներկայացուցիչների կողմից կարեւորվել է, որ նոտարների օրինակով դատավորներին եւս հնարավորություն տրվի օգտվել պետական մարմինների կողմից վարվող էլեկտրոնային շտեմարաններից այն հիմնավորմամբ, որ չնայած վերջիններս դատական գործի շրջանակներում իրենց լիազորությունների տիրույթում անհրաժեշտ տեղեկությունը ստանում են, սակայն դա տեղի է ունենում ժամանակատար գրագրության արդյունքում:

Դատավորների՝ նոտարների օրինակով պետական մարմինների կողմից վարվող էլեկտրոնային շտեմարաններից օգտվելու հարցում համապատասխան օրենսդրական փոփոխություն անելու վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության դիրքորոշումը պարզելու, ինչպես նաեւ սույն խնդրի լուծման վերաբերյալ նախարարության տեսլականը ճշգրտելու նպատակով 11.11.2022թ.-ին դիմել եմ ՀՀ արդարադատության նախարարի պարտականությունները կատարող Գրիգոր Մինասյանին:

Ի պատասխան իմ գրությանը՝ 29.11.2022թ.-ին ստացել եմ պարզաբանում առ այն, որ նախատեսում են փոփոխություններ իրականացնել «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքում, իսկ մատնանշված հարցերի շարքում է նաեւ վարչական մասնագիտացմամբ դատավորներին էլեկտրոնային տեղեկատվական համակարգերին (օրինակ՝ ԱՆ ՔԿԱԳ գործակալության, ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության բազաներ եւ այլն) հասանելիություն տալու հնարավորության նախատեսումը՝ անհրաժեշտ գաղտնիության ապահովման երաշխավորմամբ, ինչպես նաեւ այն, որ ՀՀ արդարադատության նախարարությունն ունի դրական դիրքորոշում բարձրացված հարցի վերաբերյալ: Այսինքն՝ նախարարությունը խոստացել է, որ առաջիկայում դատավորների կողմից բարձրացված հարցը կլուծվի:

Հետեւողական եմ լինելու, որպեսզի խոստումը չմնա թղթի վրա, այլ վերածվի կիրառելի օրենքի:

Միջազգայնորեն ընդունված է այն մոտեցումը, որի համաձայն՝ «ուշացած արդարադատությունը հավասար է մերժված արդարադատության», իսկ գործը ողջամիտ ժամկետում քննելու պահանջն արդար դատաքննության իրավունքի անկյունաքարերից մեկն է, եւ դրա խախտումը կարող է խաթարել արդարադատության բուն էությունը, ուստի առավել, քան հրամայական է ձեռնարկել անհրաժեշտ եւ արդյունավետ քայլեր, այդ թվում՝ օրենսդրական փոփոխությունների միջոցով, որպեսզի գերծանրաբեռնված դատավորների կատարած աշխատանքը հնարավորինս թոթափվի, հատկապես որ վերոնշյալի համատեքստում մերօրյա տեխնոլոգիական ոլորտի զարգացումը որոշակիորեն տալիս է դա իրականացնելու համար անհրաժեշտ գործիքներ»:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13

ԻՆՉ Է ԿԱՏԱՐՎԵԼ ՋԵՐՄՈՒԿՈՒՄ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Տիգրան Դանիելյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ ՊՆ N զորամասի 2-րդ դեսանտագրոհային վաշտի 2-րդ դասակի 2-րդ ջոկի նռնակաձիգ, դայմանագրային զինծառայող, կոչումով շարքային, 2022 թվականի սեպտեմբերի 13-ին՝ ժամը 00:05-ից՝ Ադրբեջանի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարության կողմից նախաձեռնված եւ իրականացված ագրեսիայի ընթացքում, 2022 թվականի սեպտեմբերի 14-ին՝ ժամը 16:00-ից 17:00-ն ընկած ժամանակահատվածում, իր ստորաբաժանման կազմում ընդգրկված լինելով Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքին հարակից՝ ՀՀ ՊՆ N զորամասի պահպանության տեղամասում մարտական առաջադրանքի իրականացմանը, մասնավորապես՝ վերադաս հրամանատարության պլանավորման համաձայն պարտավոր լինելով ստորաբաժանման կազմում մասնակցել ագրեսիայի արդյունքում ՀՀ ԶՈՒ վերահսկողությունից դուրս եկած մարտական դիրքերը ՀՀ ԶՈՒ վերահսկողության տակ վերադարձնելու մարտական խնդրի կատարմանը, հրաժարվել է այդ զինվորական ծառայության առանձին պարտականությունը կատարելուց, վերադաս հրամանատարությանը բացահայտ հայտարարել է, որ չի մասնակցի հակագրոհին եւ դրանից բխող մարտական գործողություններին, որը զուգորդվել է նշված զինվորական ծառայության առանձին պարտականությունը փաստացի չկատարելով. ստորաբաժանման կողմից մարտական առաջադրանքից բխող հակագրոհի եւ հակառակորդի հետ անմիջական մարտական գործողությունների իրականացման պարագայում շարքային Տիգրան .Դանիելյանը մնացել է տեղում:

Նշենք, որ Դանիելյանը միակ մեղադրյալը չէ: Գրել էինք, որ այս տարվա սեպտեմբերի 13-ին սկսված պատերազմի ընթացքում ուշագրավ դեպքեր են եղել, ինչի արդյունքում իրավապահները հարուցել են քրեական գործեր: Այսպիսով, Ar2Lur.a2-ի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ Իրինա Բալայանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա ՀՀ ԶՈՒԳԾ պետի 2021 թվականի օգոստոսի 25-հրամանով հանդիսացել է ՀՀ ՊՆ N զորամասի 1-ին հրաձգային գումարտակի բուժկետի պետ-բուժակ, կոչումով սերժանտ, նույն զորամասում 2022 թվականի սեպտեմբերի 14-ին հրաժարվել է զինվորական ծառայություն իրականացնելուց եւ ՀՀ ՊՆ N զորամասի հրամանատարի հրամանով սահմանված Ջերմուկի մատույցներում պաշտպանության անցնելու պարտականությունները կատարելուց, որը զուգորդվել է դրանց չկատարմամբ:

Նա մեղադրյալի աթոռին է, եւ նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել երկրից չբացակայելու արգելքը:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԿԱ ՏՈՒԺԱԾ

Դեկտեմբերի 1-ին՝ ժամը 22:06-ին, Սյունիքի մարզային ճգնաժամային կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ Լեռնաձոր գյուղի մոտակայքում տեղի է ունեցել ՃՏՊ. անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել ԱԻՆ ՓԾ մարզային փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատից մեկ մարտական հաշվարկ:

Պարզվել է, որ բախվել են Kia Rio (վարորդ՝Ա. Ա.) եւ Volvo XC60 մակնիշների ավտոմեքենաները: Kia Rio մակնիշի ավտոմեքենայի ուղեւոր Ա. Մ.-ն (ծնված 1986 թ.) արգելափակվել է ավտոմեքենայում:

Փրկարարները հոսանքազրկել են ավտոմեքենաները, փակել գազի բալոնների փականները եւ Ա. Մ.-ին դուրս բերել արգելափակումից. վերջինս հոսպիտալացվել է Քաջարանի ԲԿ, որտեղ նրա առողջական վիճակը գնահատվել է ծանր:

ՈՐՈՇՈՒՄ Է ԿԱՅԱՑՎԵԼ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ արցախյան ազատամարտի հերոս Լեոնիդ Ազգալդյանի հուշարձանը վնասելու դեպքով որոշում է կայացվել: Հայտնի է, թե ով է հուշարձանը վնասել, եւ քրեական վարույթով նախաքննության ավարտ է հայտարարվել, ու գործը ուղարկվել է դատարան: Մեղադրյալը Կարեն Խաչատրյանն է:

Կարեն Վարոսի Խաչատրյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2022թ. ապրիլի 13-ին դիտավորությամբ հարվածել եւ վնասել է արցախյան ազատամարտի հերոս Լեոնիդ Ազգալդյանի հուշարձանը:

Ապրիլի 13-ին՝ժամը 18:18-ին, ոստիկանություն զանգած քաղաքացին հայտնել է, որ ապրիլի 10-ից ապրիլի 13-ի ժամը 18.00-ն ընկած ժամանակահատվածում մուրճանման առարկայով վնասել են Մաշտոցի պողոտայի եւ Խորենացու փողոցի խաչմերուկում տեղադրված՝ Արցախի հերոս Լեոնիդ Ազգալդյանի հուշարձանի դեմքի հատվածը:

Փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ:

Համաձայն ոստիկանության՝ Կենտրոնական բաժնի քրեական հետախույզները պարզել են արարքը կատարողի ինքնությունը: Երեւանի Մաշտոցի պողոտայի բնակիչ, 58-ամյա տղամարդը բերման է ենթարկվել ոստիկանության Կենտրոնական բաժին եւ տվել խոստովանական ցուցմունք: Նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել ստորագրությամբ երկրից չբացակայելը:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ դեկտեմբերի 1-ից 2-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 52 դեպք, որոնցից 8-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՁ

«ԷԿՈՏԱՎՈՒՇԸ» ԽԱԽՏՈՒՄ Է ՕՐԵՆՔԸ

Մի քանի օր առաջ Իջեւան քաղաքի շուկային հարակից տարածքում գտնվող «ԷկոՏավուշ» ընկերության ֆիրմային խանութում կլոր տուփով հալած յուղ եմ գնել: Այդ հալած յուղն արտադրվել է Իջեւան խոշորացված համայնքի Լուսաձոր գյուղում գործող «ՀիմնաՏավուշ» զարգացման հիմնադրամի պանրագործարանում: Հալած յուղի տուփի վրա հայերեն ոչ մի գրառում չկա, բոլոր գրառումները ռուսերեն են, բացի արտադրող ընկերության անվան լատինատառ գրառումից: Սա օրենքի կոպիտ խախտում է, քանզի Հայաստանում արտադրվող, վաճառվող արտադրանքը պետք է ունենա ապրանքի վերաբերյալ հայերեն տեղեկատվություն: Լուսաձորի պանրագործարանի արտադրանք պանիրը, հալած յուղը հիմնականում առաքում են Ռուսաստան, ուստի հալած յուղի տուփին միայն ռուսերեն գրառումներ են արված: 2010թ. մայիսի 22-ին Իջեւան քաղաքում Ֆրանսիայի Օ-ԴԸ-Սեն նահանգի գլխավոր խորհրդի նախագահ Պատրիկ Դեւեջյանը եւ Տավուշի մարզպետ Արմեն Ղուլարյանը ստորագրել են համատեղ նկատառումների հուշագիր: 2011թ. Ֆրանսիայում երկու կողմերը ստորագրել են ապակենտրոնացված համագործակցության շրջանակային պայմանագիր՝ 3 տարի ժամկետով, հետագայում նման նոր պայմանագրեր են ստորագրվել: Ֆրանսիական կողմի աջակցությունը նպատակաուղղված է եղել Տավուշի մարզի գյուղատնտեսության զարգացմանը, աշխատատեղերի ստեղծմանը, մարզի սահմանագոտու բնակիչների կենսամակարդակի բարելավմանը: Հայ-ֆրանսիական համագործակցությամբ ստեղծված «ՀիմնաՏավուշ» զարգացման հիմնադրամը նաեւ բարեգործական ծրագրեր է իրականացնում, սակայն տարիների ընթացքում հիմնադրամի գործունեության հետ կապված բազում խնդիրներ են առաջացել: 2016թ. ամռանը, Լուսաձորի պանրագործարանին հարակից տարածքում հորելով, որպես անորակ արտադրանք ոչնչացրել են Լուսաձորի պանրագործարանում արտադրված 3.5 տոննա պանիրը: Սուրեն Գեւորգյանը Ֆրանսիայի հայկական հիմնադրամի տնօրենն է, նա միաժամանակ «ՀիմնաՏավուշ» հիմնադրամի ղեկավարն է, նրա կին Հասմիկը (Նանա) 2016թ. հուլիսի 1-ից Լուսաձորի պանրագործարանում արտադրվող պանիրը Ռուսաստանում իրացնող «ԷկոՏավուշի» տնօրենն է: Ամուսինների կողմից ղեկավարվող «ՀիմնաՏավուշի» եւ «ԷկոՏավուշի» բիզնես հարաբերություններում կոռուպցիոն ռիսկեր կան: Լուսաձորի պանրագործարանի արտադրական գործունեության հետեւանքով շուրջ 10 տարի Լուսաձորի տարածքում, Հայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհին մշտապես ծանր գարշահոտ է տիրում, որը շնչում են ավտոճանապարհով անցնողները:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԳՈՐԾԸ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ Է

ԽՈՇՈՐ ՉԱՓԻ ԳՈՂՈՒԹՅՈՒՆ

Ապրիլի 12-ին առանձնակի խոշոր չափի գողության դեպք է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 23:30-ի սահմաններում ոստիկանության Մալաթիայի բաժին ահազանգ է ստացվել Երեւան քաղաքի Վարուժանի փողոցի տներից մեկի բնակիչ 58-ամյա Աբրահամ Ք.-ից, որը հայտնել է, որ նույն օրը՝ ժամը 19:00-ից մինչեւ 23:00-ն ընկած ժամանակահատվածում, անհայտ անձը կամ անձինք դեռեւս անհայտ պայմաններում մտել են իր տուն եւ այնտեղից գողացել ոսկյա, արծաթյա զարդեր եւ գումար:

Աբրահամ Ք.-ն հայտնի հաղորդավար, երգահան Ավետ Բարսեղյանի կնոջ հայրն է, իսկ գողը կամ գողերը տանից հափշտակել են մոտ 110 հազար ԱՄՆ դոլարին համարժեք ոսկյա, արծաթյա զարդեր, գումար:

Եվ, ահա, իրավապահները պնդում են, որ գողության դեպքը բացահայտված է, եւ գործը դատարանում է. մեղադրյալի աթոռին է հայտնվել Սեւակ Բաբայանը: Վերջինիս մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2020 թվականի ապրիլի 12-ին՝ ժամը 19:00-ից մինչեւ 23:30-նն ընկած ժամանակահատվածում, ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, ապօրինի մուտք է գործել Երեւան քաղաքի Դանիել Վարուժանի փողոցի՝ Աբրահամ Հակոբի Քաթաբյանին պատկանող 32 տուն, 1-ին հարկում գտնվող հյուրասենյակի սեղանից վերցրել է 180.000 ՀՀ դրամ արժողությամբ կանացի ոսկյա մատանի, տանից Մայքլ Քորս ապրանքանիշի 50.000 ՀՀ դրամ արժողությամբ կանացի պայուսակ, ապա տեխնիկական միջոցի գործադրմամբ բացելով 2-րդ հարկի ննջասենյակի պատի մեջ ներկառուցված մետաղյա պահարանի դուռը՝ գաղտնի հափշտակել է առանձնապես խոշոր չափերով՝ 20.000.000 ՀՀ դրամ գումար, 14.000.000 ՀՀ դրամին համարժեք 30.000 ԱՄՆ դոլար, ընդհանուր 350 գրամ, 7.500.000 ՀՀ դրամ արժողությամբ ոսկյա զարդեր՝ Աբրահամ Քաթալյանին պատճառելով առանձնապես խոշոր չափերի՝ընդհանուր 42.325.900 ՀՀ դրամի գույքային վնաս:

Սակայն ուշագրավն այն է, որ Բաբայանը պնդում է, որ ինքը հափշտակության հետ կապ չունի: Այս իրավիճակը ցույց է տալիս, որ ենթադրյալ գողություն անողը չի ընդունում մեղադրանքը. նրա տանը խուզարկություն են իրականացրել, չեն հայտնաբերել որեւէ բան, ուստի իրավիճակը ենթադրում է , որ 30.000 ԱՄՆ դոլար, ընդհանուր 350 գրամ, 7.500.000 ՀՀ դրամ արժողությամբ ոսկյա զարդեր, 180.000 ՀՀ դրամ արժողությամբ կանացի ոսկյա մատանի, տանից Մայքլ Քորս ապրանքանիշի 50.000 ՀՀ դրամ արժողությամբ կանացի պայուսակը չկա:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՈՐԱՄԱՍ

ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ ՅՈՒՐԱՑՐԵԼ Է ԴԻԶՎԱՌԵԼԻՔԸ

Պաշտպանության նախարարության N զորամասի հրամանատար Ս.Ե.-ն, իր պաշտոնեական դիրքն օգտագործելով, շուրջ 1 տարի յուրացրել է զորամասին հատկացված եւ փաստացի իրեն վստահված ընդհանուր 2 մլն 441 հազար 985 դրամ արժողությամբ 4 հազար 515 լիտր ավտոբենզինի եւ 3 հազար 710 լիտր դիզելային վառելանյութի կտրոնները:

Ինչպես տեղեկացնում են դատախազության հանրային կապերի բաժնից, պարզվել է, որ Ս.Ե.-ն, պաշտպանության նախարարի՝ 2016 թվականի հրամանով նշանակված լինելով N զորամասի հրամանատար, պաշտոնեական դիրքն օգտագործելով, զորամասին հատկացված եւ փաստացի իրեն վստահված «ԱԻ-92» տեսակի ավտոբենզինի ու դիզելային վառելանյութի կտրոնները խոշոր չափերով յուրացման եղանակով հափշտակելու դիտավորությամբ 2021 թվականի հունվարից մինչեւ 2022 թվականի հունվարը՝ քննությամբ չպարզված օրերին, ապօրինաբար, առանց փաստաթղթավորման զորամասի գույքային ֆոնդից դուրս է բերել եւ յուրացրել է նույն զորամասին հատկացված, իրեն վստահված 4 հազար 515 լիտր «ԱԻ-92» տեսակի ավտոբենզինի եւ 3 հազար 710 լիտր դիզելային վառելանյութի կտրոններ, որոնց մի մասը հանձնել է որպես բնակարանի վարձակալության վճար, իսկ յուրացրած կտրոնների մի մասն էլ վաճառել է՝ այդ կերպ պետությանը պատճառելով խոշոր չափերի, ընդհանուր՝ 2 մլն 441 հազար 985 դրամի գույքային վնաս:

Նշվածը հաստատվել է Հակակոռուպցիոն դատարանի 2022 թվականի նոյեմբերի 16-ի մեղադրական դատավճռով (նախաքննության ընթացքում զորամասի հրամանատարը առաջադրված մեղադրանքում իրեն լիովին մեղավոր է ճանաչել, տվել է խոստովանական ցուցմունք, զղջացել է կատարած արարքի համար եւ վերականգնել պետությանը պատճառված վնասը՝ 2 մլն 442 հազար դրամի չափով):

Հսկող դատախազը միջնորդել է Պաշտպանության նախարարությանը դիտարկել զորամասի հրամանատարի հետագա պաշտոնավարման նպատակահարմարությունը:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 18 ՃՏՊ. 26 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ԳՈՒՄԱՐ Է ՀԱՏԿԱՑՐԵԼ

ՀՀ կառավարության որոշմամբ՝ վերաբաշխում է կատարվել ՀՀ ԿԳՄՍ նախարարության 2022 թվականի բյուջեով նախատեսված ծրագրերում: ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից ArmLur.am-ին հայտնեցին, որ տնտեսված միջոցներից 163 միլն 639 հազար ՀՀ դրամ գումար է նախատեսվել մի շարք կրթական հաստատությունների ջեռուցման ապահովման, նախագծման աշխատանքների, ինչպես նաեւ գույքային հագեցվածության բարելավման համար: Համաձայն որոշման՝ գումար կհատկացվի հետեւյալ աշխատանքների համար՝

-«Ալավերդու թիվ 5 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կաթսայատան կառուցման եւ ներքին ջեռուցման ցանցի անցկացման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում, փորձաքննություն,

-«Երեւանի թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի կաթսայատան կառուցման եւ ջեռուցման ցանցի անցկացում,

- «Երեւանի թիվ 105 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի պարսպի կառուցման, մուտքի դռների, արտաքին կոյուղու եւ ջեռուցման ցանցերի մասնակի աշխատանքների իրականացման ձեռքբերում,

-«Գառնու Ատոմի անվան թիվ 2 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի ջեռուցման նոր կաթսայի տեղադրման աշխատանքներ: Հաշվի է առնվել, որ դպրոցում ներկա պահին գործում է մեկ կաթսա, որը տեղադրվել է 2008 թ., եւ կաթսայի խափանման ընթացքում դպրոցի ջեռուցման հետ կապված խնդիրներ են առաջանում:

-«Երեւանի Հ. Գալստյանի անվան թիվ 83 ավագ դպրոց», «Երեւանի Ռոբերտ Աբաջյանի անվան թիվ 147 հիմնական դպրոց» եւ «Երեւանի Հ. Խաչատրյանի անվան թիվ 199 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ների ջեռուցման կաթսաների փոխարինում:

ՆՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

ԿԳՄՍ նախարարությունը Բրյուսովի պետական համալսարանը Մանկավարժական համալսարանին միավորելու նախագիծ էր դրել շրջանառության մեջ: Իշխանությունը մտադիր էր Բրյուսովը եւ Ֆիզկուլտ ինստիտուտը միավորել Մանկավարժական համալսարանին: Բրյուսովի համալսարանը փակելու լուրերի ֆոնին ուսանողները բողոքի ակցիաներ էին պարբերաբար իրականացնում: Բրյուսովի ուսանողները եւ դասախոսները նամակով դիմել էին նաեւ Նիկոլ Փաշինյանին: ArmLur.am-ի տեղեկություններով՝ ուսանողների այս պայքարն իր արդյունքը տվել է, եւ իշխանությունները մտադիր են հետ կանգնել իրենց մտադրությունից: Այս որոշման վրա ազդել է ուսանողների համառ պայքարը: Մեր տեղեկություններով՝ բուհում նման տպավորություն են ստացել նաեւ կառավարության ներկայացուցիչների հետ քննարկումներից: ArmLur.am-ը կհետեւի իրադարձությունների հետագա զարգացումներին եւ նոր մանրամասներ կհայտնի ընթերցողին: Հավելենք, որ, ArmLur.am-ի տեղեկություններով, Նիկոլ Փաշինյանը հրահանգել է կանգնեցնել բոլոր կրթական համակարգի ծրագրերը, ֆինանսավորման հարցերը, մինչեւ բուհերի միավորման հարցերին լուծում կտրվի: Բոլորը սպասում են՝ հասկանալու համար, թե հարցը ինչպես է լուծում ստանալու:

ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԸ ԿԱՏԵՍՏԱՎՈՐՎԵՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել «Կրթության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու նախագիծը, որով արտադպրոցական հաստատությունների մանկավարժական աշխատողները հնարավորություն կստանան իրենց նախաձեռնությամբ ատեստավորվելու եւ դրա արդյունքում ստանալու հավելավճար:



ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից ArmLur.am-ին հայտնեցին, որ 2021-2022 ուստարում երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներում եւ մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններում դասավանդել է 5099 ուսուցիչ (76.8 %-ը՝ կանայք), որոնց 42.6 %-ն ունեցել է միջին մասնագիտական կրթություն: Սպորտային կազմակերպություններում մարզումներն իրականացրել է 2104 մարզիչ-մանկավարժ (15.4 %-ը՝ կանայք):

Հարկ է նշել, որ առ այսօր որեւէ իրավական ակտով սահմանված չեն արտադպրոցական ուսհաստատությունների մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկն ու նկարագիրը, մինչդեռ մանկավարժների ոչ միայն մասնագիտական պատրաստվածությամբ, այլեւ գործառույթների հստակ սահմանմամբ է պայմանավորված, թե ինչպիսի կարողունակություններով պետք է օժտված լինի անձը կրթության կազմակերպման արդյունքում կարողունակ քաղաքացի ձեւավորելու համար: Ներկայում գործող ֆինանսավորման բանաձեւը հնարավորություն չի տալիս գործընթացն իրականացնելու նույն սկզբունքով եւ այս ոլորտում չի ապահովում տեղական, մարզային, պետական մարմինների, ինչպես նաեւ միջգերատեսչական համագործակցության բարելավումը, պետական բյուջեից ֆինանսավորվող ծրագրերի թափանցիկության իրագործումը: Արտադպրոցական հաստատությունների ֆինանսավորման համար անհրաժեշտ է կիրառել միասնական մոտեցում՝ հնարավորինս ստույգ հաշվարկել ֆինանսավորումը յուրաքանչյուր անհատական դեպքի համար:

Նախագծով առաջարկվող փոփոխություններով հնարավոր կլինի՝

● սահմանել հիմնական դրույթները, նպատակները, խնդիրներն ու զարգացման ուղիները, որոնք համընդհանուր են արտադպրոցական կրթության եւ դաստիարակության ոլորտում նոր որակական նախադրյալներ ստեղծելու համար,

● նպաստել մատուցվող ծառայությունների որակի եւ մատչելիության բարելավմանը, որի ապահովումը ենթադրում է ոլորտի կադրային համալրում, զարգացնող միջավայրի ստեղծում, ինքնակրթություն, փորձի փոխանակում:

Մանկավարժական գործունեությունը մանկավարժից պահանջում է գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների անընդհատ զարգացում: Հայաստանում մանկավարժների, այդ թվում՝ արտադպրոցական ուսհաստատություններում աշխատող մանկավարժների ցածր աշխատավարձը խոչընդոտում է մարդկային լավագույն կապիտալի, այդ թվում՝ արական սեռի մասնագետների մուտքը ոլորտ, վերջիններիս չի մղում մասնագիտական զարգացման: Այս խնդիրը լուծելու նպատակով պետք է մշակվի արդյունքի վրա հիմնված մանկավարժների կամավոր ատեստավորման կարգ, որը հնարավորություն կտա հավելավճարի տեսքով հասնելու աշխատավարձի բարելավման: Համաձայն ՀՀ կառավարության որոշման՝ արտադպրոցական հաստատություններում մանկավարժները կարող են դասավանդել շաբաթական 24 ժամ, որը համարժեք է 1 դրույքի: Ըստ այդմ՝ արտադպրոցական ուսհաստատությունների մանկավարժի մեկ դրույքի համար հաշվարկվում է 132 276 ՀՀ դրամ աշխատավարձ: Առաջարկվող նախագծի ընդունմամբ եւ համապատասխան կարգի գործարկմամբ արտադպրոցական ուսհաստատության մանկավարժական աշխատողները կարող են իրենց նախաձեռնությամբ մասնակցել գիտելիքների գնահատման գործընթացին եւ դրա արդյունքում ստանալ 30-50 % հավելավճար:

Ս.Հ.

ԿԵՆՍԱՉԱՓԱԿԱՆ ԱՆՁՆԱԳՐԵՐ

ՍՏԱՑԱՎ ԴՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում ժամանակավորապես՝ մինչեւ 2024 թվականի հունվարի 1-ը կդադարեցվի ՀՀ քաղաքացիներին կենսաչափական անձնագրերի տրամադրումը՝ մինչեւ ապագա սերնդի տեխնոլոգիաներով եւ անվտանգության պայմաններով օժտված կենսաչափական անձնագրերի ստեղծումն ու աստիճանաբար հին անձնագրերի՝ նորերով փոխարինումը:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին եւ կից ներկայացված օրենքների նախագծերի փաթեթն ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նիստում ստացավ դրական եզրակացությունը:

Փոխոստիկանապետ Արա Ֆիդանյանը հայտնեց, որ նախագծով նախատեսվում է ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի համապատասխան որոշմամբ նախատեսված անձնագրերի տրամադրման ժամկետը երկարաձգել մինչեւ 2023 թվականի դեկտեմբերի 31-ը, իսկ նույնականացման քարտերը տրամադրել առանց էլեկտրոնային պահոցի մինչեւ ՀՀ կառավարության որոշմամբ դրանց բնութագիր սահմանելը: Էլեկտրոնային պահոցով նույնականացման քարտերը նախատեսվում է տրամադրել մինչեւ 2023 թվականի փետրվարի 15-ը, իսկ էլեկտրոնային պահոց չպարունակող նույնականացման քարտերը՝ 2023 թվականի փետրվարի 15-ից: «Բացի այդ, ժամանակավորապես՝ մինչեւ 2024 թվականի հունվարի 1-ը, կդադարեցվի ՀՀ քաղաքացիներին կենսաչափական անձնագրերի տրամադրումը մինչեւ ապագա սերնդի տեխնոլոգիաներով եւ անվտանգության պայմաններով օժտված կենսաչափական անձնագրերի ստեղծումն ու աստիճանաբար հին անձնագրերի՝ նորերով փոխարինումը»,-ասաց Ֆիդանյանը:

Այսպիսով, նախագծով սահմանվում է, որ 2023 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2024 թվականի հունվարի 1-ը դադարեցվում է սույն օրենքով նախատեսված անձնագրերի տրամադրումը (փոխանակումը), իսկ մինչեւ 2023 թվականի հունվարի 1-ը Հայաստանի Հանրապետության քաղաքացուն տրամադրված անձնագրերը համարվում են վավեր:

Օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի դեկտեմբերի 30-ից:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՀՈՐԴՈՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԶԱՐԴԵՐ

Աշխարհահռչակ ամերիկահայ հեռուստաաստղ Քիմ Քարդաշյանը, հանրահայտ փոփ երգչուհի Շերը (Շերլին Սարգսյան), ամերիկաբնակ ղրղզյուսեր Էրիկ Էսրայելյանը համացանցում դիմում են իրենց հետեւորդներին՝ հորդորելով գնել հայկական գրություններով զարդերն ու այդպես աջակցել աշխարհի հինավուրց տաճարներից Էջմիածնի Մայր տաճարի վերանորոգման աշխատանքներին:

Քիմ Քարդաշյանը «Ինստագրամ»-ի «Սթորի» բաժնում հոլովակ է զետեղել, որում նշում է՝ միշտ ճանապարհներ է փնտրում Հայաստանին աջակցելու համար, իր հետեւորդներին է ներկայացնում Metal Alchemist ապրանքանիշի «Հայր մեր», «Արարատ լեռ», «Սեր» եւ այլ գրություններով ապարանջաններն ու այլ զարդերն ու ասում, որ աշխարհում շատ պատմական վայրեր կան, սակայն ամենահինավուրց տաճարները Հայաստանում են:

Նա հիշեցնում է, որ այդ տաճարներից մեկում տարիներ առաջ կնքել է իր երեխաներին: Քարդաշյանը տեղեկացնում է, որ տաճարը վերանորոգման փուլում է, ու ընդգծում, որ ապարանջանների վաճառքից ստացված եկամտի հարյուր տոկոսը փոխանցվելու է տաճարի վերանորոգման աշխատանքներին:

Շերը «Ինստագրամ»-ի իր պաշտոնական էջում մի լուսանկար է հրապարակել, որի վրա գրված է, որ իր հայկական արմատներն իր ինքնության հսկայական մասն են, եւ ինքը հպարտ է Էջմիածնի Մայր տաճարի վերանորոգմանն աջակցելու համար կազմակերպված նախաձեռնության մի մասը լինել:

ՀԱՂՈՐԴՈՒՄ Է

ԶԵՓՅՈՒՌ ԲՐՈՒՏՅԱՆԸ ՀՂԻ Է

StarHit-ը, վկայակոչելով անանուն աղբյուրներին, հայտնում է, որ Պավել Դրիլուշնիի կինը՝ դերասանուհի Զեփյուռ Բրուտյանը, հղի է:

Հրատարակության տվյալներով՝ զույգը երեխա կունենա 2023 թվականի մայիսին: Հաղորդվում է, որ Բրուտյանին հսկում են «Լապինո» կլինիկական հիվանդանոցում, որտեղ դիմում են շոուբիզնեսի շատ աստղեր:

«Հղիությունը 14-15 շաբաթական է՝ չորրորդ ամիսը: Զեփյուռն ու Պավելն արդեն մի քանի անգամ եկել են մեզ մոտ, միշտ միասին այցելում են բժշկի, ամուսինը հոգ է տանում ապագա մայրիկի մասին, աչքը նրանից չի կտրում»,- պատմել են կլինիկայում: Աղբյուրի փոխանցմամբ՝ դերասանուհու հղիությունն ընթանում է առանց բարդությունների, ուստի ճանապարհորդությունը նրան հակացուցված չէ:

ԼՈՒՐԵՐ

ԱՄԵՆԱԱԶԴԵՑԻԿ ԿԱՆԱՆՑԻՑ

Ամերիկացի երգչուհի Բիլի Այլիշը Financial Times ամսագրի վարկածով ընդգրկվել է 2022 թվականի 25 ամենաազդեցիկ կանանց ցուցակում: «Բիլլի Այլիշը դարձել է Գլաստոնբերի եւ Կոաչելլա փառատոնների գլխավոր արտիստ, յոթ անգամ «Գրեմմի»-ի դափնեկիր, Ջեյմս Բոնդի թեմայով երգերի կատարող (2021-ի «No Time to Die» ֆիլմ) եւ «Օսկար»-ի դափնեկիր նախքան ԱՄՆ-ում ալկոհոլ օգտագործելու օրինական տարիքը», - հիշեցրել են վարկանիշը կազմողները: Ստեղծագործական մասնագիտությունների մյուս ներկայացուցիչներից ամսագրի վարկանիշում ընդգրկվել են գրող Էննի Էռնոն, դերասանուհի Միշել Յեոն, նկարչուհի Էնն Իմհոֆը եւ ռեժիսոր Ցիցի Դանգարեմբգան, ԱՄՆ Գերագույն դատարանի դատավոր Քեթանջի Բրաուն Ջեքսոնը, ուկրաինական «Քաղաքացիական ազատությունների կենտրոն» իրավապաշտպան կազմակերպության ղեկավար Օլեքսանդրա Մատվիյչուկը, Saint Laurent-ի գործադիր տնօրեն Ֆրանչեսկա Բելետինին եւ Ֆինլանդիայի վարչապետ Սաննա Մարինը:

3 ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ 3 ՀԱՂԹԱՆԱԿ

Ֆուտբոլի Իսպանիայի հավաքականը 2010թ. աշխարհի առաջնության չեմպիոնի տիտղոսը նվաճելուց հետո հաջորդ 3 առաջնություններում տարել է ընդամենը 3 հաղթանակ:

ԱԱ-2014-ում Իսպանիան 3:0 հաշվով հաղթել է Ավստրալիային, 2018-ին 1:0 հաշվով հաղթել է Իրանին, Քաթարում ընթացող առաջնության խմբային փուլում էլ 7:0 հաշվով պարտության է մատնել Կոստա Ռիկային: Երրորդ տուրում Լուիս Էնրիկեի գլխավորած թիմը 1:2 հաշվով պարտվեց ճապոնացիներին եւ խմբում գրավեց երկրորդ տեղը:

1/8 եզրափակիչում Իսպանիայի մրցակիցը կլինի Մարոկկոյի թիմը:

ՀԻԱՍԹԱՓՈՒԹՅՈՒՆ ԱՀՌԵԼԻ Է

Գերմանիայի հավաքականի գլխավոր մարզիչ Հանս-Դիտեր Ֆլիկը մեկնաբանել է աշխարհի առաջնության խմբային փուլի արգելքը չհաղթահարելը: Խմբային փուլի վերջին տուրում գերմանացիները 4:2 հաշվով հաղթեցին Կոստա Ռիկային, սակայն Իսպանիայի հավաքականը 1:2 հաշվով պարտվեց ճապոնացիներին, որոնք բարձրացան առաջին տեղ, Իսպանիան 4 միավորով գրավեց երկրորդ տեղը, իսկ Գերմանիան 4 միավորով երրորդն է:

«Ես չեմ մեղադրում Իսպանիային: Ինքներս ենք մեղավոր մեր տապալման համար, պետք է ավելի արդյունավետ խաղայինք առաջին երկու տուրերում: Մենք շատ ժամանակ ունեինք, հատկապես՝ Ճապոնիայի հետ տանուլ տված խաղում եւ իսպանացիների դեմ: Մեր հիասթափությունն ահռելի է»,- ասել է Ֆլիկը: Գերմանիայի հավաքականը ճապոնացիներին պարտվել էր 1:2 հաշվով, Իսպանիայի հետ խաղացել էր ոչ-ոքի՝ 1:1: 2014-ին՝ աշխարհի չեմպիոնի տիտղոսը նվաճելուց հետո, Գերմանիան երկրորդ առաջնությունում անընդմեջ դուրս չեկավ փլեյ-օֆֆ:

● *Դեկտեմբերի 4-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Սիրելիներից մի՛ բաժանվեք» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ովքե՞ր են համարվում գույքահարկ վճարողներ:

Սեդրակ Հունանյան (63 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Գույքահարկ վճարող են համարվում Հայաստանի Հանրապետությունում եւ օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, միջազգային կազմակերպությունները եւ դրանց կողմից Հայաստանի Հանրապետությունից դուրս ստեղծված կազմակերպությունները, Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, ինչպես նաեւ քաղաքացիություն չունեցող անձինք, որոնց Հայաստանի Հանրապետության տարածքում պատկանում է սույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված հարկվող օբյեկտ համարվող գույքը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների եւ հիմնարկների:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Գույքահարկը սեփականության իրավունքով Հայաստանի Հանրապետությունում եւ օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպություններին, միջազգային կազմակերպություններին եւ դրանց կողմից ՀՀ-ից դուրս ստեղծված կազմակերպություններին, ՀՀ քաղաքացիներին, օտարերկրյա քաղաքացիներին, ինչպես նաեւ քաղաքացիություն չունեցող անձանց պատկանող, հարկվող օբյեկտ համարվող գույքի համար սույն օրենքով սահմանված կարգով եւ չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս ներկայացնել անասնաբուժասանիտարական փորձաքննության ծանուցում:

Հայաստան Մինասյան (59 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. «Անասնաբուժասանիտարական փորձաքննություն» ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար անձը պարտավոր է վճարել օրենքով սահմանված պետական տուրքը եւ պետական տուրքի վճարման անդորրագիրը կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի կողմից գեներացված անդորրագիրը կամ անդորրագրի 20-նիշանոց ծածկագիրը ծանուցման հետ միաժամանակ ներկայացնել լիազոր մարմին:

«Անասնաբուժասանիտարական փորձաքննություն» ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց հաշվառումը, ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքի կասեցումն ու դադարեցումը, ինչպես նաեւ ծանուցման ենթակա գործունեության իրականացման հետ կապված բոլոր հարաբերությունները կարգավորվում են «Գործունեության իրականացման ծանուցման մասին» եւ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով:

ՀՀ ֆինանսների նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Համաձայն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի՝ «Անասնաբուժասանիտարական փորձաքննություն» գործունեության իրականացման համար տարեկան պետական տուրքը կազմում է՝

- իրավաբանական անձինք՝ 50.000 ՀՀ դրամ,
- ֆիզիկական անձինք՝ 10.000 ՀՀ դրամ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Գրեթե 40 տարվա ընթացքում առաջին անգամ ժայթքել է աշխարհի ամենամեծ գործող հրաբուխը՝ Մաունա Լոան, որը գտնվում է Հավայան կղզում: 1843 թվականից ի վեր Մաունա Լոան ժայթքել է 33 անգամ: Մաունա Լոա հրաբուխը վերջին անգամ ժայթքել էր 1984 թվականին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **2.12.2022**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: